# ԵՐԵՎԱՆԻ ԱՐՇԱՎԻՐ ՇԱՎԱՐՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 40

# ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ԼԻԱՆԱ ՍԼԱՎԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**2023 – 2028 թթ.**



**ԵՐԵՎԱՆ 2023**

# Բովանդակություն

Ներածություն..........3
Հաստատության գործունեությունը .......... 7
Հաստատության նյութատեխնիկական բազան, շենքային պայմանները, պարամետրերը ..........12
Նյութատեխնիկական բազա և ենթակառուցվածքներ..........16
Կառավարման եվ խորհրդակցական մարմինները..........20
Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը..........31
Դպրոցի համագործակցությունը առանձին կառույցների և շահառու կազմակերպությունների հետ..........32
Աշխատակազմի գործունեություն՝ վարչական և ուսուցչական կազմը..........38
Հաստատության ուսումնական միջավայրը..........40
Մանկավարժական համակազմ..........42
Կրթության չափորոշչային որակ..........46
Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ..55
Բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայր..........56
Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները..........56
Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող տեխնոլոգիաները..........57
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն..........59
Հաստատության առկա հիմնախնդիրները..........62
Ոլորտներ Մանկավարժական համակազմ..........64
Աշակերտական համակազմ..........66
Ուսումնառության որակ..........68
Կրթական միջավայր..........69
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ..........72
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան, տեխնոլոգիաներ և նորարարություններ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը..........74
Ակնակալվող արդյունքներ..........78
Վերահսկողություն..........80
Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներ..........81
Զարգացման ծրագրում օգտագործված հապավումները..........86
Հավելված..........,87

# Ներածություն

*Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:*

ՀՀ Սահմանադրություն, հոդված 39

*Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթությունը հարափևության գրավականներից մեկն է:i*

ՀՀ կրթության մասին օրենք, հոդված 4 կետ 3

«Երևանի պրոֆ. Ա. Շավարշյանի անվան թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028 թթ. **ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու» մասին հրաման N 35-Ն պահանջներին համապատասխան և** մշակվել է հիմք ընդունելով ու առաջնորդվելով

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով,

«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»

«Կրթության մասին»

«Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին»

«Լիցենզավորման մասին»

«ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2006 թվականի N 1262-Ն որոշում»

«ՀՀ կառավարության 22 սեպտեմբերի 2022 թվականի N 1481-Ն որոշում»

«ՀՀ ԿԳՄՍ նախարարի 7 դեկտեմբերի 2022 թվականի N 79-Ն հրաման»

«ՀՀ կառավարության N 1392 որոշում»

ՀՀ կառավարության 4 հունիսի 2020 թվականի N 914-Ն որոշում»

«ՀՀ կառավարության 23 Հուլիսի 2015, 797 - Ն»

«ՀՀ առողջապահության նախարարի 28 մարտի 2017թ. N 12-Ն հրաման»

«ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 21-Լ հրաման»

«ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22 սեպտեմբերի 2022 թվականի N 35-Ն հրաման»

«ՀՀ օրենքը ստնդարտացման մասին»

«11 օգոստոսի 2022 թվականի N 1265-Ն որոշումը»

«Հանրակրթության պետական չափորոշիչներից»

ինչպես նաև մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումներով ու դպրոցում առկա հիմնախնդիրներով:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների «Երևանի պրոֆ. Արշավիր Շավարշյանի անվան թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի առնելով կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը, ավանդույթները, մանկավարժական աշխատակազմի փորձը և դպրոցի կարիքները:

**Սույն զարգացման ծրագրի հիմքում ընկած են այսօրվա դպրոցի պահանջները, այն են՝** սովորողների համար ազգային հենքի վրա հիմնված որակյալ, մատչելի, բոլորին հասանելի կրթություն ապահովելը՝ նպաստելով բազմակողմանիորեն զարգացած, կարողունակահեն, կրթության մարտահրավերներին դիմագրավող, հայրենասիրական և մարդասիրական ոգով դաստիարակված կարողունակ քաղաքացիների ձևավորմանը, որը կկարողանա ինտեգրվել սոցիումին և կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

Մարտահրավերների դարաշրջանում ժամանակակից դպրոցից պահանջվում է՝

1. Սովորողին տալ հիմնարար գիտելիքներ
2. Լեզվական գրագիտության կարողունակություն
3. Ձևավորել սովորել սովորելու կարողունակություն
4. Նպաստել սովորողների ինքնաճանաչմանը
5. Ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
6. Ձևավորել թվային և մեդիա կարողունակություն
7. Նպաստել սովորողների հաղորդակցման հմտությունների ձևավորմանը
8. Ստեղծել նպաստավոր պայմաններ հետազոտական գործունեության համար

9. Սովորողի մոտ ձևավորել այնպիսի անձնային որակներ, որոնք կկարողանան ապահովել սովորողի շարունակական ուսումը
10. Հաշվի առնել սովորողների նախասիրություններն ու կարողունակությունները
11. Ձևավորել մշակութային, մաթեմատիկական, տնտեսական կարողունակություններ
12. Երաշխավորել սովորողների իրավունքները
13. Ձևավորել մասնագիտորեն կողմնորոշված քաղաքացիներ

Զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հիմքում դրվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերն ու առանձնահատկությունները.

- ✓ Դպրոցի ներքին գործունեության 2018-2019, 2019-2020, 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
- ✓ Հաշվի է առնվել հաստատության աշակերտական, ծնողական, մանկավարժական խորհուրդների առաջարկները:
- ✓ Նախորդ 5 տարիների գործունեությունը

Ուսումնական հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Պրոֆ. Ա. Շավարշյանի անվ հ.40 հիմնական դպրոցի սույն զարգացման ծրագրի մշակման համար կատարել եմ հետևյալ հաջորդական քայլերը.

1. Սահմանել հաստատության գործունեությունը
2. Վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:
3. Ներկայացրել առկա հիմնախնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները:
4. Գործողության ոլորտների և նրանցում առկա հիմնախնդիրների վերլուծության արդյունքում սահմանել կոնկրետ նպատակներ:
5. Յուրաքանչյուր նպատակի համար սահմանել այն խնդիրները, որոնց լուծման արդյունքում կարելի է հասնել այդ նպատակին:

6. Յուրաքանչյուր խնդրի համար սահմանել, ձևակերպել համապատասխան գործողություններ, դրանց իրականացման պատասխանատուներ, ժամկետներ, ականկալվող արդյունքներ:
7. Կանխատեսել ծրագրի իրականացման ռիսկերը
8. Նախատեսել ծրագրի մշտադիտարկման, վերահսկողության մեխանիզմներ, մշակել այն ցուցանիշները, որոնց միջոցով կարելի է գնահատել ծրագրի իրականցման արդյունավետությունը:

# Հաստատության գործունեությունը

«Երևանի Արշավիր Շավարշյանի անվան հ. 40 հիմնական դպրոց, պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց)» շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական և հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է :

Երևանի Արշավիր Շավարշյանի անվան հ.40 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը ստեղծվել է Երևանի Արշ. Շավարշյանի անվան հ.40 դպրոցի /բյուջետային հիմնարկ/ իրավահաջորդը հանդիսացող Արշավիր Շավարշյանի անվան հ.40 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության անվանափոխության արդյունքում /գրանցված թիվ 27321003395, վկայական N03Ա058240, ծածկագիր 10007782, տրվ. 27.01.2003թ.) և հադիսանում է նրանց իրավահաջորդը:

1939 թվականին հիմնադրվել է Վորոշիլովի անվան հ. 40 արական դպրոցը, 1940թ –ից եղել է միջնակարգ: Դպրոցի շենքը տիպային է, կառուցվել է 1950թ: 1962-63 ուստարում անվանակոչվել է պրոֆ. Արշ. Շավարշյանի անունով:

| | |
|---|---|
| Դպրոցի անվանումն է՝ | «Երևանի պրոֆեսոր Արշավիր Շավարշյանի անվան N40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ |
| Հաստատության տեսակը՝ | Հիմնական հանրակրթական դպրոց |
| Իրականացվող ծրագրերի աստիճանը՝ | Առաջին և երկրորդ աստիճանի հանրակրթական |
| Կազմակերպա-իրավական տեսակը՝ | ՊՈԱԿ |
| Իրավաբանական տեսակը՝ | Ոչ առևտրային |
| Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է՝ | 20.11.2002թ. |
| Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ | 900018004722 |
| ՀՎՀՀ՝ | 01518881 |

| | |
|---|---|
| Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ | 27321003395 |
| Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը՝ | 27.01.2003թ. |
| Գործունեության ժամկետը՝ | անժամկետ |
| Դպրոցն ունի ՀՀ զինանշանով կլոր կնիք | |
| Փոստային դասիչ | 010 |
| Դպրոցի շենքի տիպը | տիպային |
| Դպրոցի գտնվելու վայրն է՝ | ՀՀ , ք. Երևան, Վարդանանց 30<br>Կենտրոն համայնք |
| Դպրոցի հեռախոսահամարն է՝ | 010 550643 |
| Դպրոցն ունի | 2 մասնաշենք |
| Հարկայնությունը՝ | 3 |
| Ջեռուցման եղանակը՝ | Լոկալ ջեռուցման ցանց |
| Թեքահարտակ՝ | 1 |

ՀՀ կառավարության 26.06.2014թ. հ. 637 –Ա որոշմամբ դպրոցի 2-րդ մասնաշենքի 1-ին հարկը 620,3մ$^2$ մակերեսով տարածքը 25 տարի ժամկետով, **անհատույց** *օգտագործման իրավունքով տրամադրվել է «Ռոբերտ Սահակյանցի անվան անիմացիոն արվեստանոց» ՀԿ –ին;*

Դպրոցը նախատեսված է **500** աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները ըստ լիցենզիայի

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. մարտի 3-ի թիվ 105-Ա/ք հրամանով դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝ **հիմնական** ընդհանուր կրթություն **400** սհմանային տեղով և 29.05.2013թ. **տարրական** հանրակրթական ծրագիր իրականացնելու համար **100** սահմանային տեղեր:


ԼԻՑԵՆԶԻԱ


ԼԻՑԵՆԶԻԱ

| | |
|---|---|
| Դպրոցը | միահերթ է |
| Դպրոցն աշխատում է | 5-օրյա աշխատանքային շաբաթով |
| Դպրոցում սովորողների թիվը՝ | 79 |
| ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը՝ | 3 |
| Օտար ազգի սովորող | 1( ֆիլիպին) |
| Դասարանների թիվը ՝ | 9 |
| Դասարանների խտությունը՝ | 8-9 աշակերտ |
| Գրադարանային ֆոնդը՝ | 2770 օրինակ գիրք |
| Ընթերցողների թվաքանակը՝ | 45-50 (աշակետների մոտ 64%-ը) |
| Ինտերնետ կապի առկայությունը՝ | առկա |
| Դպրոցի էլեկտրոնային հասցեն՝ | 40dproc@mail.ru, school40@schools.am |
| Սոցիալական հարթակ | https://www.facebook.com/profile.php?id=100057630451614&mibextid=ZbWKwL |
| Դպրոցի պաշտոնական կայքը՝ | https://yerevan40.schoolsite.am |
| Աշակերտական խորհրդի ֆեյսբուքյան խմբի էջը՝ | https://www.facebook.com/groups/674271967547670/?ref=share&mibextid=NSMWBT |

| | |
|---|---|
| Դպրոցի տարբերանշանն է | |

Էլեկտրոնային հղումները վկայում են տեղեկատվության հավաստիությունը

Դպրոցն ունի համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքների հաստատված պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորում են իրենց աշխատանքները

Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն): Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով: Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի: ԿՏԱԿ-ի շնորհիվ ապահովվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու շարունակականությունը, հանրակրթական դպրոցների միջև համընդհանուր համակարգչային ցանցը, համակարգչային ուսումնական կենտրոնների ստեղծումը նպաստելով ուսուցիչների համակարգչային գրագիտության բարձրացմանը: Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, հետևողականորեն վերլուծություններ կատարելու հանրակրթական պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում գործածվում են ներքոհիշյալ **փաստաթղթերը՝** ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-Ի N 28-Ն հրամանի ՝

1. Էլեկտրոնային դասամատյաններ
2. Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան

6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան

**Դպրոցում խստիվ արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն:**

Հաստատության խնդիրը յուրաքանչյուր սովորողի համար բարոյահոգեբանական անհրաժեշտ միջավայրի ստեղծումն է, որտեղ սովորողը կարող է դրսևորել իր կարողություններն, ձեռք բերել կարողունակություններ, որը կկիրառի հետագայում:

*«Ստեղծել փոքրիկ ներառական դպրոցական համակարգ, որ յուրաքանչյուր երեխայի համար ապահովված լինի կրթության մեջ առավելագույն ընդգրկվածություն, հավասար մասնակցություն, ուսումնառության մատչելիություն և որակյալ կրթություն»:*

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը, ՀՊՉ-ին համընթաց կրթություն իրականացնելը:

***Ի՞նչ վերջնարդյունքներ եմ ակնկալում.***

*Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել*

- ✓ *համակողմանիորեն զարգացած*
- ✓ *մասնագիտորեն կողմնորոշված*
- ✓ *ազգային արժեքներ կրող*
- ✓ *հայրենասեր*

- ✓ *գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ*
- ✓ *համաշխարհային աշխապտաշուկայում կողմնորոշվող և մրցունակ*
- ✓ *մարդասիրության ոգով դաստիարակված, կարողունակ*
- ✓ *համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր քաղաքացիների ձևավորում, ինքնաճանաչ, հայրենաճանաչ*

## Հաստատության նյութատեխնիկական բազան, շենքային պայմանները, պարամետրերը

Արշավիր Շավարշյանի անվան N 40 հիմնական դպրոցն ունի 2 մասնաշենք, որոնք ունեն վերանորոգման կարիք, կահավորման անհրաժեշտություն:

Դպրոցն ունի՝

| | |
|---|---|
| Դասասենյակ | 9 |
| Համակարգչային դասասենյակ | 1 |
| Վարչական աշխատասենյակներ | 2 |
| Ուսուցչանոց | 1 |
| Լաբորատորիա | 3 |
| Առարկայական սենյակ | 2 |
| Շախմատի սենյակ | 1 |
| Նախնական զինպատրաստության | 1 |
| Զենքի պահեստ | 1 |
| **Սպորտ դահլիճ (չի գործում)** | 1 |
| Բացօթյա մարզահրապարակ | 1 |
| Նիստերի դահլիճ ( 110 տեղ) | 1 |
| Գրադարան | 1 |
| **Բուֆետ (չի գործում)** | 1 |
| Բուժսենյակ | 1 |
| Սանհանգույց | 4 |
| Պահակակետ | 1 |

# Մարդկային ռեսուրսներ

| | |
|---|---|
| Ընդհանուր աշխատակազմ | 27 |
| Վարչական աշխատողներ | 3 |
| Մանկավարժներ | 19 |
| Համատեղությամբ աշխատողներ | 4 |
| Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածություն | 14,5ժամ |
| Գրադարանավար | 1 |
| Լաբորանտ | 1 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ | 7 |
| Հաշվապահ | 1 |
| Պահակ<br>Ցերեկային | 3<br>1 |
| Հավաքարար | 2 |
| Աշակերտների թիվ | 79 աշակերտ |
| Տարրական | 31 |
| Հիմնական | 47 |
| ԿԱՊԿ ունեցող աշակերտների թիվ | 3 աշակերտ<br>(1-ը թեթև, 2-ը միջին) |
| Ծնողական համայնք | |

## II. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### Շենքային պայմաններ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Դասասենյակները լուսավոր են, համապատասխանում են ԱՆ 28 մարտի 2017թ. 12-Ն հրամանի պահանջներին, այսինքն մեկ սովորողին բաժին ընկնող մակերեսը համապատասխանում է սահմանված նորմերին | Համալիր չեն հարմարեցումները ԿԱՊԿ ունեցող սովորողների համար, չկա ռեսուրս - սենյակ |
| Անվտանգ ուսումնական միջավայր՝ տարհաման տեսանելի փակցված սխեմա | Համակարգչային լսարանի և առարկայական կաբինետների, անբավարար կահավորվածություն (բավարարված է 30%-ով) |
| Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, ինտերնետ կապ, ունի առանձին հատկացված բուժկետ | Ուսումնանյութական բազայի անհամապատասխանություն ժամանակակից և չափորոշչային պահանջներին |
| Վերանորոգված սանհանգույցներ՝ (տարրական մասնաշենք) | Չվերանորոգված սանհանգույցներ( 1-ին մասնաշենքում) |
| Դպրոցում առկա են բնագիտական առարկաների լաբարատորիաներ | Բնագիտական առարկաների լաբորատորիաները չունեն ժամանակակից և նոր սարքավորումներ, իսկ նյութերը՝ հնացած են |
| Դպրոցի շենքը շրջապատված է ցանկապատով | Ցանկապատը վերանորոգման կարիք ունի |
| Վերանորոգված՝ 5, որից անվանակոչված՝ 3 դասասենյակ | Ֆիզկուլտ դահլիճը (չի գործում) անմխիթար վիճակ է |
| Մասնակի վերանորոգված՝ 4 դասասենյակ | Դպրոցը չունի տեսախցիկներ |
| Շախմատի դասասենյակ | Շախմատի դասասենյակը վերանորոգված չէ |
| Սալիկապատված միջանցք (31մ²) | Չվերանորոգված միջանցքներ, շարքից դուրս եկած հատակ՝ վտանգում է դպրոցի ֆիզիկական միջավայրը |
| Մարզահրապարակ | Դպրոցի բակը կանաչապատման կարիք ունի |
| Փոխված պատուհաններ (37 եվրոպատուհան) | Տանիքը ունի հիմնանորոգման կարիք |
| 5 դասասենյակներում, տարրական մասնաշենքի սանհանգույցում և միջանցքում տեղադրվել են նոր դռներ (9) | Մաշված դռեր, պատուհաններ<br>, |
| Գրադարան՝ հայերենով, ռուսերենով գեղարվեստական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությամբ | Բացակայում է ժամանակակից և օտարալեզու գեղարվեստական գրականություն, մասնագիտական գրականություն, բառարաններ, հանրագիտարաններ |

| | |
|---|---|
| Դպրոցն ունի հանդիսությունների դահլիճ | Հանդիսությունների դահլիճում չկա համապատասխան գույք |
| Առկա է լոկալ ջեռուցում, կաթսայատուն<br>Ապահովված է խմելու հոսող ջրով | Դպրոցում **չի գործում** բուֆետը |
| Դպրոցն ունի 1 շարժական թեքահարտակ | |

## Դպրոցի շենքային պայմանները և պարամետրերը

| **Շինությունների և հարմարությունների անվանումը** | **Քանակը** | **Մակերեսը ($մ^2$)** | **Ծավալը ($մ^3$)** | **Այլ տեղեկություններ** |
|---|---|---|---|---|
| Շենք -շինություն | 2 | 3191,20 | | |
| Առանձնասենյակ | 3 | 115,32 | 369,024 | |
| Դասասենյակներ<br>1-ին մասնաշենք<br>2-րդ մասնաշենք | 9<br>5<br>4 | 444,44<br>242,63<br>201,81 | 653,544<br>361,198<br>301,97 | |
| Առարկայական սենյակներ | 2 | 100,85 | 312,454 | |
| ՆԶՊ | 1 | 51,33 | 153,99 | |
| Ինֆորմատիկա | 1 | 49,52 | 158,464 | |
| Զենքի պահեստ | 1 | 20,41 | 61,23 | |
| Լաբարատորիաներ | 3 | 111,52 | 366,354 | |
| Նիստերի դահլիճ | 1 | 93,73 | 299,936 | |
| Գրադարան | 1 | 51,74 | 155,22 | |
| Բուժսենյակ | 1 | 13,11 | 41,952 | |
| Բուֆետ | 1 | 51,33 | 153,99 | |
| Զուգարաններ | 4 | 57,55 | 180,764 | 1-ն մասնաշենք h.-=3,20<br>3-րդ հարկ h= 3,40<br>2-րդ մասնաշենք h-=.3<br>Մարզադահլիճ h.= 6,40<br>Նկուղայի հարկ h=2,90<br>Կաթսայատուն h= 3,50 |
| 1-ին մասնաշենք | 2 | 40,57 | 129,824 | |
| 2-րդ մասնաշենք | 2 | 16,98 | 50,94 | |
| Աշ.խորհ. սենյակ | 1 | 49,52 | 168,368 | |
| Շախմատի սենյակ | 1 | 49,91 | 149,73 | |
| Պահակ. սենյակ | 1 | 16,42 | 52,544 | |
| Արխիվ | 1 | 20,48 | 65,536 | |
| Սպորտդահլիճ | 1 | 131,35 | 840,64 | |
| Դպրոցին կից տարածք, որից բացօթյա | 2765 | 1000 | | |
| պորտհրապարակ | 1 | | | |
| Կաթսայատուն | 1 | 16,56 | 57,96 | |
| Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը | | 458,25 | 1,328,925 | |
| Տեխնիկական նշանակության սենյակ | 1 | 19,58 | 56,782 | |
| Արեստահագործական պահեստ | 2 | 91,83 | 275,49 | |
| Ջեռուցումը | | | | Կենտրոնացված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ջրամատակարարումը | | | | Շուրջօրյա կենտրոնացված |
| Վարձակալությամբ տրված տարածք | | | | ---------- |
| Շենքի դրսի մաքրվող աշխատանքը մ$^2$ | - | 2000 | - | |
| Հեռավորությունը ամենամոտ դպրոցից | - | - | - | 350մ |
| Անհատույց օգտագործման տարածք | | 620,3 | | |

Հիմք՝ շինության տեխնիկական անձնագիր

## Նյութատեխնիկական բազա և ենթակառուցվածքներ

- *Համակարգչային սենյակ*
- *Համակարգչային տեխնիկա, սարքեր և սարքավորումներ*
- *Էլեկտրոնային կրթական ռեսուրսներ*
- *Լաբորատոր սարքավորումներ*
- *Առարկայական կաբինետներ*
- *Լաբորատորիաններ, արհեստանոց*
- *Հանդիսությունների դահլիճ*
- *Մարզահրապարակ*
- *Բուֆետ*
- *Բուժկետ*

| *Իրավիճակի վերլուծություն* | | |
|---|---|---|
| ***Ուժեղ կողմեր*** | ***Քանակ*** | ***Թույլ կողմեր*** |
| *Core(TM)i3* | *1* | *Նոր սերնդի համակարգիչների բացակայություն* |
| *Pentium* | *4* | |
| *Pendium* | *1* | |
| *Բազմաֆունկցիոնալ սարք* | *1* | *Էլեկտրոնային գրատախտակ* |
| *Դյուրակիր համակարգիչ* | *2* | *Լուսացիր* |
| *Լուսացիր* | *1* | |
| *Երաժշտական կենտրոն* | *1* | |
| *Բարձրախոս* | *1* | |
| *Ավտոմատ* | *1* | *Լաբորատոր ժամանակակից սարքավորումների բացակայություն* |
| *Նռնականետ* | *1* | |
| *Օդամղիչ հրացան* | *3* | |
| *Գեղարվեստական գրքեր* | *2770* | *Ժամանակակց, օտարալեզու, օտարագիր, դասական գրականության պակաս* |
| *Դասագրքեր* | *1332* | |
| *Ծրագրային գեղ. գրքեր* | *50* | |

| | | |
|---|---|---|
| *Ուսումնական գրքեր* | *30* | |
| *Ուսումնաօժանդակ* | *25* | |
| *Քարտեզներ* | *30* | |
| *Շարժական գրատախտակ* | *1* | |
| *Գլոբուսներ* | *4* | |
| *Կրակմարիչներ* | *12* | |
| *Հրշեջ վահանակ* | *1* | |
| *Ուսումնական նյութեր* | | |
| *Դիդակտիկ պարագաներ* | | |
| *Լաբորատոր սարքեր, սարքավորումներ* | | |
| *Ներառական կրթությունն իրականացնելուն համապատասխան գործիքներ (առկա է տարբեր տեսակի դիդակտիկ խաղեր)* | | |

***Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցը համալրվել է անհրաժեշտ ռեսուրսներով և նյութատեխնիկական բազայով ՝ ելնելով առաջնահերթություններից***

| **Նյութատեխնիկական բազան** | **Քանակ** | **Ձեռք է բերվել/արժեքը** |
|---|---|---|
| Դյուրակիր համակարգիչ Acar Aspire 3A315-56, | **1** | **2021թ** Լիազոր մարմնի կողմից<br>**307800** ՀՀ դրամ արժողությամբ |
| Լուսացիր Canon XEED X7 | **1** | **2021թ** Լիազոր մարմնի կողմից<br>**315000** ՀՀ դրամ արժողությամբ |
| Բազմաֆունկցիոնալ սարք | **1** | Հոգաբարձուների խորհրդի կողմից |
| Գրատախտակներ (Whiteboard) / | **4** | **2022թ** Բարերարի միջոցներով |
| Գրատախտակ | **1** | **2022թ** Բարերարի միջոցներով |
| Շարժական գրատախտակ | **1** | |
| Աշակերտական Նստարան | **20** | Երկրապահ կամավորականների միություն ՀԿ-ի կողմից<br>**350000**ՀՀ դրամ<br>**45000** ՀՀ դրամ |
| Սեղան | **10** | |
| Ուսուցչական սեղան | **1** | |
| Ուսուցչական սեղան | **2** | **2021թ** Բարերաի միջոցներով |
| Ուսուցչի աթոռ | **9** | |
| Համակարգչային սեղան | **5** | 2019թ. ԱԳԲԱ բանկ |
| Դինամիկ, բարձրախոս | 1.1 | Հոգաբարձուների խորհուրդ |
| Գրքեր | **50** | Նվիրատվություն |
| Դիտակտիկ նյութեր | | Հոգաբարձուների խորհուրդ |
| Մոլբերտ | 5 | Հոգաբարձուների խորհուրդ |

*Դպրոցն ունի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ*

## Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսներ հաշվետու ժամանակաշրջանում

### Հաշվետու ժամանակաշրջանում 2018-2023թթ. շենք –շինությունների պահպանում և վերանորոգում

2018-2019թթ, հիմնանորոգվել է տարրական մասնաշենքում 2 դասասենյակ 102քմ, 1 աշխատասենյակ 51 քմ, մասնակի վերանորոգվել է տանիքը, կատարվել է մետաղյա ցանկապատի վերանորոգման և ներկման աշխատանքներ, վերանորոգվել է ՆԶՊ դասասենյակը 36քմ, սալիկապատվել է 31քմ միջանցք, փոխվել տարրական մասնաշենքի մուտքի դռները, մասնակի վերանորոգվել է 2 դասասենյակ 103քմ (1-ին մասնաշենքում), լամինապատվել են 5 դասասենյակի, դպրոցի փոխտնօրենի, տնօրենի կաբինետի, ընդունարանի հատակները: Բարերարների և հոգաբարձուների խորհրդի միջոցներով :

Հիմնանորոգվել է տարրական մասնաշենքի զուգարանները 16,98քմ, դպրոցի բյուջետային միջոցների հաշվին:

2019-2020թթ, հիմնանորոգվել է 1 դասասենյակ 52 քմ անվանկոչվել ՀՀ ազգային հերոս Արկադի Տեր- Թադևոսյանի անունով: Անվանակոչվել է Կոմանդոսի կենդանության օրոք Բարերարների և հոգաբարձուների խորհրդի միջոցներով:

2021-2022 թթ հիմնանորոգվել է 2 դասասենյակ և անվանկոչվել 44-օրյա պատերազմում նահատակված և մեր դպրոցի նախկին սաներ՝

Հետախույզ՝ Համլետ Աշոտի Հովհաննիսյանի անունով 52քմ, այն վերանորոգվել է բարերարների միջոցներով;

Արման Խաչիկի Խաչատրյանի անունով 51քմ, այն վերանորոգել է Պատանի երկրապահ կամավորների միություն, ՀԿ- ի կողմից

2023թ. նորացվեցին պետական խորհրդանիշների ցուցանակները, «Աշխարհն առանց թափոնների» ծրագրի շրջանակներում «Ամենաշատ պլաստիկ հավաքագրած դպրոց»

անվանակարգում հաղթող ճանաչվելու համար ստացանք դրամական պարգև 80.000 ՀՀ դրամ, որը կազմակերպել էր Երևանի քաղաքապետարանը, Կոկա-կոլա ՀԲՔ Արմենիա և ISSD կազմակերպությունը:

**2022թ.** փոխվել է **27** պատուհան, **2** դուռ, դպրոցի բյուջետային միջոցների հաշվին:

**2018-2023թթ**. ընթացքում ստեղծվել է կանաչ անկյուններ: Նորացվել են միջանցքների, դահլիճի, **6** դասասենյակների, գրադարանի, շախմատի սենյակի, ուսուցչանոցի, **2** վարչական աշխատասենյակների, աշխատանքի ուսուցման կաբինետի, ֆիզիկայի լաբարատորիայի, ՆԶՊ դասասենյակի, պահակակետի վարագույրները և 3 դասասենյակներում առկա են շերտավարագույրներ: Փոխվել են միջանցքների և դասասենյակների քիվերը: Վերամոնտաժվել է 7 դասասենյակների և միջանցքների (տարրական մասնաշենք) լուսավորությունը: Փոփոխությունները կատարվել են բարերարների և հոգաբարձուների խորհուրդի միջոցներով:

Նորացվել է **2** դասասենյակի սեղան(20) աթոռները(40), **3** դասասենյակի սեղան **(37)** աթոռները **(50) :** Վերանորոգվել հանդիսությունների դահլիճի աթոռները:

Դպրոցը մանկավարժական, ծնողական և աշակերտական հոգատարության կենտրոնում է:

## Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսներ հաշվետու ժամանակաշրջանում

**Ի ուրախություն մեզ, դպրոցն ընդգրկվել է ՀՀ կառավարության 2021թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրի» ցանկում, հուսանք, որ կունենանք՝**

- ✓ **վերանորոգված, ժամանակակից պահանջներին հաապատասխան շենքային պայմաններ**
- ✓ **կահավորված դասասենյակներ և լաբորատորիաներ, անհրաժեշտ գույքով և նյութերով**

# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցում գործում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ հանրակրթության մասին օրենքին և դպրոցի Կանոնադրությանը համապատասխան ձևավորված խորհուրդներ՝ կոլեգիա կառավարման և խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական և աշակերտական, ինչպես նաև հոգաբարձուների խորհուրդ, որոնք կանոնավոր կերպով գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները և իրենց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը;

**Կառավարման խորհուրդը** մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Կառավարման խորհուրդ-տնօրեն արդյունավետ համագործակցությունը մշտապես գործում է արդյունավետ՝ ի շահ դպրոցի:

*Դպրոցի լիազոր մարմինը՝ Երևանի քաղաքապետարանը, իրականացնում է ընդհանուր կառավարումը, վերահսկողությունը և ապահովում բնականոն գարծունեությունը: Այն սահմանված կարգով հաստատել է հաստատության կանոնադրությունը և փոփոխությունները***:**

Դպրոցի կոլեգիալ կառավարման խորհրդի կազմը **/9 անդամ/** հաստատված է գործող կարգի համաձայն:

Դպրոցի կոլեգիալ կառավարման խորհուրդի **կազմը** *ըստ Երևանի քաղաքապետի*

22. 07.2021թ. N 2603-Ա որոշման

| N | Անուն, ազգանուն հայրանուն | Կրթություն | Ո՞ւմ կողմից է նշանկվել | Աշխատանքի վայրը և պաշտոնը |
|---|---|---|---|---|
| 1. | Կարանյան Կարինե Շուբերտի | Բարձրագույն | Երևանի քաղաքապետարան | «Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Ներսիսյան Մարիամ Վալերիկի | Բարձրագույն | Երևանի քաղաքապետարան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության միջազգային ներդրումային և այլ հաստատությունների նախագծերի համակարգման բաժնի մասնագետ |
| 3. | Պետրոսյան Հայկ Լյովայի | Բարձրագույն | Երևանի քաղաքապետարան | «Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, մարզիչ |
| 4. | Փանոսյան Մարիամ Անդրանիկի | Բարձրագույն | Երևանի քաղաքապետարան | Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ |
| 5. | Մարտիրոսյան Ալլա Լևոնի | Բարձրագույն | ՀՀ ԿԳՄՍՆ | ՀՀԿԳՄՍ նախարարության նախնական(արհեստագործ ական) և միջին մասնագիտական կրթությանև ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի գլխավոր մասնագետ |
| 6. | Խաչատրյան Սյուզաննա Լազարովի | Բարձրագույն | Մանկավարժական խորհուրդ | Երևանի «Ա. Շավարշյանի անվան թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ |
| 7. | Կիրակոսյան Գոհար Սերյոժայի | Բարձրագույն | Մանկավարժական խորհուրդ | Երևանի «Ա. Շավարշյանի անվան թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, ուսուցիչ |
| 8. | Ջոհրաբյան Հայկուշ Գարեգինի | Միջին մասնագիտական | Դպրոցի ծնողական խորհուրդ | «Ս. Աստվածամայր» հիվանդանոցում մայրապետ |
| 9. | Կարապետյան Գայանե Նիկողոսի | Բարձրագույն | Դպրոցի ծնողական խորհուրդ | «Հիլզ» ռեստորանային համալիրում գործադիր տնօրեն |

*Հաշվետու ժամանակաշրջանում գումարվել են*

| Նիստեր | **2018-2019** | **2019-2020** | **2020-2021** | **20221-2022** | **2022-2023** |
|---|---|---|---|---|---|
| Հերթական | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Արտահերթ | 3 | 3 | 2 | 8 | 2 |

***Թվարկենք գումարված նիստերի ընթացքում քննարկված  հարցերից մի քանիսը***՝

- **իրականացրել է** տնօրենի գործունեության նկատմամբ վերահսկողություն
- հաստատել  է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակը
- **վերահսկում է** *ուսումնական հաստատություն զարգացման ծրագրի կատարումը*
- **քննարկել է** և **հավանություն** է տվել դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին
- տնօրենի ներկայացմամբ՝  **քննարկել է** ամենամյա ծախսերի նախահաշիվը
- հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը
- հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, **հավանություն է տվել** և ներկայացրել համապատասխան լիազորված մարմին
- քննարկել ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները
- քննարկել է ներքին և արտաքին գնահատման արդյունքները
- **իրականացրել է** օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված լիազորությունները

Խորհրդի գործունեությունը համապատասխանում է գործող նորմերին:

## ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝  ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

*Դպրոցի տնօրենը*՝

- Խորհրդի քննարկմանն է ներկայացրել դպրոցի ֆինանսատնտեսական
- ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը

- **կազմել է** դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն ու ամենամյա ծախսերի նախահաշիվը և հաստատության Խորհրդի հավանությամբ ներկայացրել լիազորված մարմին
- **աջակցել է** դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին
- մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ **հաստատել է** հաստատության ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժների հաշվետվությունները
- **մասնակցել է** Խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա **մշակել** և Խորհրդի **հաստատմանն** է ներկայացրել կառուցվածքը, այդ թվում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական ներքին կարգապահական «Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները» և աշխատողների «Ներքին կարգապահական կանոնները»
- **խրախուսել** և **խթանել է** աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը
- **իրականացրել է** վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ
- ուսումնական պլանին համապատասխան՝ **ապահովել է** կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար
- **ապահովել է** դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը
  Իրականացրել է ներպրոցական վերահսողություն
  Ապահովել է դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ
- Ապահովել, իրականացրել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները

Դպրոցը համագործակցում է և՛ կառավարման և՛ խորհրդակցական մարմինների հետ: Դպրոցի գործունեությունը **թափանցիկ է**:

## Խորհրդակցական մարմիններ

Համաձայն հաստատության Կանոնադրության՝ կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև դպրոցի զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով, բացի կառավարման մարմնից, ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ *մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ*՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 77-րդ կետի: Խորհրդակցական մարմինները ընտրվում են մեկ ուսումնական տարի ժամկետով, ազատ են իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Մանկավարժական խորհուրդը կազմված է **19** մանկավարժներից:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել են ՝

| | **2018-2019 ուստարի** | **2019-2020 ուստարի** | **2020-2021 ուստարի** | **2021-2022 ուստարի** | **2022-2023 ուստարի** |
|---|---|---|---|---|---|
| Նիստեր | 12 | 8 | 14 | 17 | Ընթացքի մեջ |
| Հերթական | 8 | 6 | 14 | 15 | 13 |
| Արտահերթ | 4 | 2 | - | 2 | 2 |

Հաշվետու ժամանակահատվածում մանկավարժական խորհուրդը իրականացրել է հետևյալ գործառույթները՝

- հավանություն է տվել տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին և դասաբաշխմանը: Հաշվետու ժամանակաշրջանում յուրաքանչյուր ուսումնական տարվա՝ մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստին սահմանված

կարգով ձևավորվել է հաստատության մանկավարժական խորհուրդը 1 /մեկ/ ուսումնական տարի ժամկետով

- ընտրվել է մանկավարժական խորհրդի նիստերի մշտական քարտուղար և հաստատել իր աշխատակարգը
- քննարկվել է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը
- քննարկվել է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի հետ կապված հարցերը
- սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը
- քննարկվել է առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման հարցերը
- քննարկվել և տնօրենի հաստատմանն է ներկայացվել հաստատության ուսումնական պլանը
- քննարկվել է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի արդյուքների ամփոփիչ հաշվետվությունը
- քննարկվել է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների, դասղեկների, առանձին գործող մանկավարժների հաշվետվությունները
- քննարկվել են հաստատության ներքին աշխատանքային կարգապահական և ուսումնառության ներքին կարգապահական կանոնները:

**Որոշում է ընդունել**

- Դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին
- սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու մասին
- դպրոցի փոխադրական դասարաններում տարեվերջյան քննություններ սահմանելու մասին
- սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու մասին
- որևէ առարկան ուսումնասիրելուց ազատելու մասին
- շրջանավարտներին ավարտական կրթության վկայական տալու մասին
- օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու մասին, դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին
- քննարկվել և հաստատվել է «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերի վարձավճարների զիջման փոխհատուցման» ծրագրից օգտվող սովորողների ցուցակները՝ պահպանելով սոցիալական արդարության սկզբունքները: Ղեկավարվելով օգոստոսյան առաջին նիստին մանկավարժական խորհրդի կողմից ընդունված որոշումներով, ելնելով հաստատության կոմպլեկտավորումից և հաստատված ուսումնական պլանից՝ կատարվել է դասաբաշխում, կազմվել է ուսումնական պարապմունքների դասացուցակ, կանոնակարգվել դասավանդման աշխատանքների կատարման ռեժիմը
- Մանկավարժները մասնակցել են հաստատության «Ներքին կարգապահական կանոնների» մշակմանը՝ ելնելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջներից
- Ծնողական խորհրդի հետ համագործակցությամբ ամբողջացրել հաստատության «Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները»
- Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի

ներկայացուցիչներ՝ սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի (օրինակ անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու հարցը) և այլ հարցերի քննարկման ժամանակ:

Մանկավարժական խորհրդի նիստերը **բաց են**:

## Ծնողական խորհուրդ

Համաձայն սահմանված կարգի՝ յուրաքանչյուր ուսումնական տարի ձևավորվել են դասարանների ծնողական խորհուրդները և կազմավորվել դպրոցի ծնողական խորհուրդը, որից էլ ընտրվել է խորհրդի նախագահ, որը համաձայն կարգի դարձել է մանկավարժական խորհրդի անդամ:

***Ծնողական խորհուրդի*** կազմը /9 անդամ/ հաստատված է գործող կարգի համաձայն:

| **Դաս** | **Անուն ազգանուն** | **Կրթություն** | **Աշխատանքի վայրը** | **Պաշտոն** | **Հեռախոսի համար** |
|---|---|---|---|---|---|
| I | Շահինյան Աստղիկ | Բարձրագույն | Չի աշխատում | | 093342079 |
| II | Հովհաննսյան Զարուհի | Միջնակարգ | »SAS» սուպերմարկետ | Վաճառողուհի | 077808971 |
| III | Կարապետյան Գայանե | Բարձրագույն | «Հիլլզ» ռեստորանում | Տնօրեն | 098781687 |
| IV | Բազիկյան Մարիաննա | Միջին մասնագիտական | Ատամնաբուժարան | Բուժքույր | - |
| V | Սահակյան Սվետա | Միջնակարգ | Չի աշխատում | - | 099554645 |
| VI | Շտայան Այլոնա | Միջին մասնագիտական | Չի աշխատում | - | 091504144 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| VII | Գրիգորյան Արմինե | Բարձրագույն | «Սիմպլիռեմ» ՍՊԸ | Հաշվապահ | 099555185 |
| VII | Ջոհրաբյան Հայկուշ | Միջին մասնագիտական | «Ս. Աստվածամայր» հիվանդանոց | Մայրապետ | 094143358 |
| IX | Մուրադյան Լիլիթ | Միջնակարգ | Չի աշխատում | | 099660223 |

Ծնողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունենում դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացներին, հանդես է գալիս առաջարկություններով և նախաձեռնություններով, որոնք նպաստում են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Դպրոցի ծնողական խորհուրդը սահմանված կարգով տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման հետ կապված հարցեր: Լսել է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և ստացել ծնողներին հետաքրքրող հարցերի պատասխանները: Ծնողական խորհուրդն իր գործունեությամբ ամրապնդել է դպրոց-ծնող կապը, օգնել կիրառելու սովորողների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջներ: Դպրոցի ծնողական խորհուրդը մասնակցել է «Ուսումնառության ներքին կարգապահական կանոնների» մշակմանը, արել կոնկրետ առաջարկություններ: Յուրաքանչյուր սովորողի համար դպրոց ընդունվելիս սահմանված կարգով կնքվել է «Պետական հանրակրթական դպրոցի սովորողի ծնողի և հաստատության միջև կնքվող կրթական ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր՝ սովորողի օրինական ներկայացուցչի և դպրոցի միջև: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների աջակցությամբ կազմակերպում է բազում էքսկուրսիաներ, այցելություններ դեպի թանգարաններ և այլ միջոցառումներ: 2022-2023թթ. նոր ուսումնական տարվանից ծնողների դիմումների համաձայն հաստատությունում իրականացվում է **երկարօրյա** ուսուցում, որը նպատակ ունի աջակցել հետ մնացող աշակերտներին և ծնողներին՝ դասապատրաստման գործում; Ծնողական խորհուրդը գործունեությունը ծավալել է իր իրավասությունների սահմաններում: Ծնողական

խորհրդի վերջին տարիների աշխատանքները ամփոփված են ներքոնշյալ աղյուսակում.

| | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Ծնողխորհուրդ հանդիպում | 5 | 4 | 4 | 5 | Ընթացքի մեջ |
| Հերթական | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Արտահերթ | 1 | - | - | 1 | 1 |
| Միջոցառում | 34 | 23 | 37 | 40 | 31 |
| Այցելություն | 20 | 19 | 19 | 21 | 18 |
| Խրախուսանք (պատվոգիր) | 10 | 4 | 2 | 2 | 3 |
| Առաջարկություններ | 3 | 2 | 3 | 2 | 2 |

Դպրոցը ակտիվ համագործակցում  է ծնողների և համայնքի հետ, իրականացնում համայնքային տարաբնույթ միջոցառումներ, փառատոներ, ծրագրեր և այլն:

**<u>Աշակերտական խորհուրդը</u>** (այսուհետ՝ ԱԽ) կազմը */12 աշակերտ/* հաստատված է գործող կարգի համաձայն և խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Այն ինքնավար մարմին է, որը նույնպես մի շարք նախաձեռնությունների և առաջարկությունների հեղինակ է: ԱԽ ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: ԱԽ-ն մասնակցում է  դպրոցի, քաղաքային և մարզային միջոցառումներին, համագործակցում տարբեր ՀԿ-ների հետ, իրականացնում ծրագրեր, կազմակերպում միջոցառումներ, վիկտորինաներ, գրքերի քննարկումներ, որոնք հետաքրքիր են դարձնում դպրոցական կյանքը ու գրավիչ՝  կրթական միջավայրը: Համգործակցային հուշագիր են ստորագրել Գավառի թիվ 5 դպրոցի աշակերտական խորհրդի հետ, որի արդյունքնում կատարել են քննարկումներ, բանավեճեր, կազմակերպել են սպորտլանդիա, ֆուտբոլի մրցումներ, ասմունքի մրցույթ, ինչպես նաև նկարչական մրցույթ, ՀՀ վաստակավոր նկարիչ Խաչիկ Աբրահամյանի նախագահությամբ: Աշակերտական խորհրդի վերջին տարիների աշխատանքները ամփոփված են ներքոնշյալ աղյուսակում:

| | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աշխորհուրդի նիստ | 8 | 9 | 9 | 9 | 9 |
| Արտահերթ | - | - | - | - | 1 |
| Միջոցառումներ | 9 | 4 | 5 | 12 | 6 |
| Շաբաթօրյակ | 2 | 2 | 2 | 3 | 3 |
| Սպորտային խաղեր | 1 | 2 | 5 | 6 | 2 |

**Հոգաբարձուների խորհուրդ**

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար ստեղծվել է **հոգաբարձուների խորհուրդ (այսուհետ՝ ՀԽ)**, որը ոչ միայն բավականին վերանորոգման աշխատանքներ կատարեց, այլ նպաստեց դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացմանը 2018-2023թթ.( տես՝ էջ 18 )

Խորհրդի կազմում ընդգրկված են դպրոցի շրջանավարտներ, դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձեր:

Դպրոցի խորհրդակցական մարմինների անդամները գործում են բարեխղճորեն և նպաստում դպրոցի առջև ծառացած խնդիրների իրագործմանը:

## Կառավարման խորհուրդ և խորհրդակցկան մարմիններ

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Դպրոցը ունի հոգաբարձուների խորհուրդ | Խորհրդակցական մարմինների համագործակցային աշխատանքի պակաս |
| Դպրոցը, աշակերտական խորհուրդը ակտիվ համագործակցում է հասարակական կազմակերպությունների և այլ դպրոցների հետ | Ծնողական խորհուրդը կարող է ավելի ակտիվ մասնակցություն ունենալ դպրոցի գործունեության և հեռանկարային պլանների քննարկմանը |
| Ախ ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ տեղադրվում է ուսումնադասիարակչական գործընթացին վերաբերող նյութեր | Պասիվ է կառավարման խորհուրդը |
| Նիստերը կազմակերպվում են ժամանակին | Խորհրդի անդամները հաճախ անհաղորդ են դպրոցի անցուդարձին |
| Ծնողական խորհուրը աջակցում է սոցիալապես անապահով ընտանիքներին և միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև աջակցում բազում էքսկուրսիաների, այցելութունների կազմակերպմանը | Առարկայական մասնախմբերը քիչ են համագործակցում հարևան դպրոցների մ/մ հետ |

| | |
|---|---|
| Հաճախակի են դպրոցում կազմակերպվում աշակերտ-ուսուցիչ-ծնող սեմինարներ, քննարկումներ, դասընթացներ | Ծնողները ակտիվ չեն, նախաձեռնող չեն Հաճախ, ինչո՞ւ չէ, նաև դժգոհ |
| Ծնողական խորհուրդը պարբերաբար լսում է տնօրենի կատարած աշխատանքների մասին, դպրոցի հեռանկարային պլանների մասին և առաջարկում է խրախուսել լավագույն ուսուցիչներին / պատվոգրերով/ | Կլոր-սեղան քննարկումներին քիչ մասնակցություն |

Որպես դպրոցի տնօրեն՝ պետք է կարողանալ գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար, որը կիրականացվի բոլոր շահառու մարմինների համագործակցության արդյունքում և դպրոցը կդառնա առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ: Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների, ինչպես նաև կրթության շահառու կազմակերպությունների հետ:

## Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Խորհրդին է ներկայացվում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողություններ ժամանակացույցը | Նախաձեռնողականության պակաս |
| Խորհրդին հավանությանն է ներկայացվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը և հաշվետվությունները | |
| Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները | |
| Տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով | |
| Պարբերաբար ներկայացնում զարգացման ծրագրի կատարողականության և ուսումնադաստիրակչական աշխատանքների հաշվետվություններ | |
| Ծնողական խորհրդի աջակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներում | |

| | |
|---|---|
| Բոլոր միջոցառումների, նախաձեռնությունների հրապարակումները կան ֆեյսբուքյան էջում (տես՝ դպրոցի ֆեյսբուքյան էջ) https://www.facebook.com/profile.php?id=100057630451614&mibextid=ZbWKwL<br>Մշտապես կապը դպրոց -համայնք- ծնող | |

## Դպրոցի համագործակցությունը առանձին կառույցների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ, կրթության շահառու կազմակերպությունների հետ: Հաջորդ էջում պատկերված գծապատկերը ավելի մանրամասն տեղեկություն կտրամադրի համագործակցող կառույցների վերաբերյալ:


ՀՀ արդյունաբերող
ՀՀ մասնագիտացված ուսումնական հաստատություններ
ՀՀ իրավապահ մարմիններ
Հիմնական և ավագ դպրոցներ
Դպրոց
Դպրոցի գործունեությամբ շահագրգռվող անձինք
Կրթության կառավարման լիազորրված մարմին
Նախադպրոցական հաստատություններ
ԶԼՄ-ներ

**Դպրոցը համագործակցում** է՝

Երևանի քաղաքապետարանի, ԿԳՄՍ նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, Կենտրոն վարչական շրջանի, Նախադպրոցական հաստատությունների, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի ,ԳԹԿ-ի, ԾԻԳ-ի, ՏՄԱԿ-ի, ԶԼՄ-ների, կրթության գործունեությամբ շահագրգիռ անձանց, ՀՀ իրավապահ մարմինների, Վետերանների *խորհուրդի*, ՄԱԿ-ի, տարբեր բուհերի և միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ և այլն:

Դպրոցը ունենալով քիչ թվով աշակերտներ ծավալել է շատ ակտիվ գործունեություն: Հաշվետու ժամանակահատվածում համագործակցել և համագործակցության հուշագիր է ստորագրվել նաև ներքոնշյալ կառույցների հետ.

| Հուշագիր | Համագործակցություն |
|---|---|
| • Գավառի հ.5 դպրոց<br>• Աբովյանի հ.2 դպրոց<br>• Համո Սահյանի անվան գրադարան<br>• Փրո Փռուզ,, բրիտանական կենդանապաշտպան կազմակերպություն<br>• .Պատանեկան ստեղծագործության կենտրոն<br>• «Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցացիա» իրավական ՀԿ<br>• Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոն ՓԲԸ<br>• Ընդդեմ իրավական կամայականության ՀԿ<br>• «Հայ- Հնդկական բարեկամություն» ՀԿ<br>• Հայաստանի ազգային ագրարային համալսարան | • Երևանի հ. 185, հ.146, հ.39 հիմնական դպրոցներ<br>• Գերմանիայի Վիսբադեն քաղաքի հայկական համայնքի կիրակնօրյա դպրոց<br>• Հ. 22 գրադարան<br>• Հովհ.Թումանյանի անվան գրադարան<br>• ISSD կազմակերպություն<br>• «Զարթնիր» ՀԿ<br>• Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատուն<br>• Կոնֆուցիուսի ինստիտուտ<br>• Թիկունք ՀԿ<br>• Դինամո մարզական ՀԿ<br>• Հազարաշեն ՀԿ<br>• Էյ Թի փի ՀԿ<br>• Աքսիոմա կրթական հարթակ<br>• Дом русской книги |

Համագործակցության արդյունքում 2018-2023թթ. դպրոցում անվճար ուսուցանվել է ռոբոտաշինության, իրավաբանություն և հոգեբանություն, թուրքերեն, պար, ուսուցանվում է հնդկերեն, կարպետագործության:

Դպրոցը ակտիվ մասնակցում է ԿՋՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպած նախագծերին և ծրագրերին՝ « Ընթերցանությունը տարրական դպրոցում»

«Մեդիասպառո՞ղ թե մեդիաստեղծո՞ղ», «Ես եմ ռեժիսորը», «Ազգային երգը դպրոցում» և այլ նախագծերին և ծրագրերին

ԿԳՄՍՆ - «Բարբառը մեր հարստությունն է»

«Քո արվեստը դպրոցում»

Բնագիտական, բնապահպանական ծրագրերի և նախագծերի

ԳիտՍԵՐունդ ծրագրին, ինչպես նաև ակտիվ մասնակցում է Կենտրոն վարչական շրջանի կողմից կազմակերպած միջոցառումներին, գրադարանների կողմից կազմակերպվող տարբեր միջոցառումների, գրքի շնորհանդեսների, սպորտ դպրոցներում կազմակերպվող մրցույթների, շախմատի մրցաշարերի, տարբեր քննարկումների և բանավեճերի, *ինչպես նաև այցելություններ՝ Ծիծեռնակաբերդ, Հաղթանակ զբոսայգի, Եռաբլուր:*

Դպրոցը կազմակերպում է նաև ազգային տոներ, փառատոներ ներգրավելով համայնքի բնակչությանը: Կազմակերպում է մշակութային և սոցիալական բնույթի **արտադասարանական և արտադպրոցական** միջոցառումներ, ինքնավարության օր, հեքիաթի ընթերցման օր ՝ կարդում է տատիկը, գրական-երաժշտական երեկոներ, զրույցներ, քննարկումներ, բանավեճեր, վիկտորինաներ, հուշ- երեկոներ: Դպրոցում ավանդույթ է դարձել՝ եռակողմ քննարկումները՝ աշակերտ-ծնող-ուսուցիչ, ամանօրյա տոնավաճառ, գրքի տոն, մայրենիի օր, անկախության օր, բանակի օր, ուսուցչի տոն, տյառնընդառաջ, զատիկի տոն և այլն:(տես՝ https://www.facebook.com/profile.php?id=100057630451614&mibextid=ZbWKwL )

## Դպրոցի համագործակցությունը

| Իրավիճակի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| **Կրթության կառավարման մարմինների ԿԳՄՍՆ և Լիազորված մարմին հետ**<br>Համագործակցում և օրենքով սահմանված կարգով իրականացում է հրամանների, հրահանգների, որոշումների, կարգադագրերի, աշխատողների, սովորողների իրավունքների, ազատությունների, պաշտպանության, կրթության որակի ապահովման համար<br>ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների, ուսումնական ծրագրերի իրականացման առաջարկությունների ներկայացում և հաստատում<br>ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան | Աշակերտների նախաձեռնության պակասը<br><br>Ոչ բոլոր ծնողներնն են ակտիվ |
| ***Տեղական ինքնակառավարման*** **մարմինների հետ**<br>Սոցիլապես անապահով երեխանների ընդգրկվածությունը տարբեր սոցիալական ծրագրերի մեջ՝ ամառային ճամբարներ...<br>Միջդպրոցական մրցումներ՝ սպորտլանդիաներ, հանդիպումներ, քննարկումներ գրադարաններում | Դպրոց-համայնք թույլ կապերը<br>Բարեգործական ծրագրերի ներդրման բացակայություն<br>Ինքնուրույն նախաձեռնությունների պակաս |

| | |
|---|---|
| **Ծնողական խորհրդի** համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ<br><br>Համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին անվճար դասագրքերի ապահովումը(շահառու մարմին)<br><br>ԾԽ մասնակցությունը դպրոցում իրականացվող նախաձեռնություններին և միջոցառումներին (տոնավաճառներ,ցուցահանդեսներ,նա խագծեր,շաբաթօրյակներ,թեմատիկ միջոցառումներ)<br><br>**Աշակերտական խորհուրդի** և ԾԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում<br><br>Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն<br><br>Բոլոր միջոցառումների,նախաձեռնությունների հրապարակումը դպրոցի ֆեյսբուքյան և պաշտոնական կայքերում<br><br>Մշտապես կապը դպրոց -համայնք- ծնող<br><br>Ծխ աշխատանաքները երկարօրյա խմբակում ընդգրկված աշակերտների արտաժամյա հետաքրքրությունների կազմակերպման ուղղությամբ<br><br>Ամենամյա եռակողմ նիստ, հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն<br><br>Ակտիվ ծնողների և աշակերտների խրախուսում /պատվոգիր, շնորհակալագիր/ | |

**Աշխատակազմի գործունեություն՝ վարչական և ուսուցչական կազմը**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| **Վարչական կազմ**<br>Ղեկավարման բազմամյա փորձ<br>Համագործակցային և թիմային աշխաանքի իրականացում<br>Նպատակաուղղված և արդյունավետ ներդպրոցական վերահսկողություն՝ միտված կրթության որակի ապահովմանը | |
| Մանկավարժական կազմ<br>Աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժներ(բոլոր ուսուցիչները ունեն համապատասխան որակավորում)<br>Չափորոշչային պահանջների համապատասխան կրթության որակ, դպրոցի ուսուցիչներն մասնակցում են նախատեսված բոլոր վերապատրաստումներին | Որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչների բացակայություն<br><br>Կամավոր ատեստավորման մասնակցության խուսափում<br><br>Խթանող, մոտիվացնող գործիքների պակաս |

| | |
|---|---|
| **Բազմակարծիք, ներառական**,մասնակցային արժեքային միջավայր,որն արտահայտվում ՄԻ նիստերում և ընդգրկվում ուսումնադաստիարակչական,<br>Ներքին կարգապահական,<br>Ներքին գնահատման հաշվետվություններում աշակերտակենտրոն մոտեցումները<br>Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը<br>Մեթոդական սեմինարներ՝ միտված ուսուցման որակի բարձրացմանը Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները:<br>Քաղաքացիական դաստիարակությունը. արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորում, մասնագիտական կողմնորոշման ապահովում<br>Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում այցեր տարբեր արտադրական գործարաններ, ուսումնական բարձրագույն հաստատություններ և հանդիպումներ<br>Արտադասարանական և համադպրոցական միջոցառումները, որոնք պարտադիր հրապարակվում են դպրոցական ֆեյսբուքյան էջում (տես՝https://www.facebook.com/profile.php?id=100057630451614&mibextid=ZbWKwL ) | |

## Հաստատության ուսումնական միջավայրը

Կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկը ուսումնական միջավայրն է, որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը, սովորողի առողջության պահպանմանը, ֆիզիկական զարգացմանը:

Հաստատության ուսումնական միջավայրը լուսավոր է, ընդարձակ, հարմարավետ: Միջանցքներում առկա են գեղեցիկ և կանաչ անկյուններ: Դպրոցը պետք է լինի հարմարավետ, ունենա աշխատանքային բարոյահոգեբանական մթնոլորտ: Գործընթացի կենտրոնում պետք է լինի սովորողը, որը ուսումնական միջավայրում ազատ ու անկաշկանդ կդրսևորի իր առավելագույն ներուժը: Ուսուցիչը պետք է մոտիվացված լինի:

Անանուն հարցումները ապացուցում են, որ դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և չկան սովորողի նկատմամբ բռնության, հալածանքի, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, օտարման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր, (վաղ են հայտնաբերվում և կանխարգելվում են): Դպրոցում **հալածանքի, օտարման, բռնության կանխարգելման նպատակով կատարում ենք վերահսկում՝**

- համագործակցում ՏՄԱԿ-ի հետ
- կազմակերպում ծնող-աշակերտ-ուսուցիչ դասընթացներ բուլինգի վերաբերյալ
- հանդիպում – իրազեկում ոստիկանի հետ
- զրույցներ հոգեբանի հետ
- դասղեկի ժամերին դաս-զրույցներ, քննարկումներ՝ անհանդուրժողականության, մեդիայի վտանգների մասին
- կազմակերպում մեդիագրագիտության դասընթացներ
- Աշակերտները ներգրավված են ուսումնական պրոցեսի մեջ,աշակերտի առօրյան ակտիվ և հագեցած է:

Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական մթնոլորտ, երեխաների իրավունքները պաշտպանված են: Երեխաները, ինչպես և նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում իրենք պաշտպանված են:

Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը: Խստորեն վերահսկվում են բացակայությունները, ճշտվում պատճառները: Պահպանվում են սանիտարահիգենիկ կանոնները: Ախտահանվում են դասասենյակները: Արտակարգ իրավիճակներում անցնում հեռավար ուսուցման՝ ըստ սահմանված կարգի:

## Իրավիճակի վերլուծություն

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Միջավայրը հարմարավետ է սովորողների համար և առկա է մեկ թեկահարթակ դպրոցի մուտքի մոտ | Հաշմանդամություն ունեցող աշակերտների համար միջավայրի հարմարավետություն և խելամիտ հարմարցումներ չկան: |
| Դպրոցն ունի համակարգչային սենյակ | Համակարգչային դասասենյակը ունի վերանորոգման, վերազինման կարիք |
| Բացօթյա մարզահրապարակ | Մարզահրապարակը հարմարեցումների կարիք ունի գծանշումներ, ցանցեր և այլն |
| Դպրոցն ունի ՆԶՊ դասասենյակ, զինանոց | ՆԶՊ դասասենյակը վերանորոգման կարիք ունի |
| Դպրոցն ունի հանդիսությունների դահլիճ, գրադարան | Հանդիսությունների դահլիճը խիստ վերանորոգման կարիք ունի<br>Գրադարանը ունի վերանորոգման կարիք, չունի հարմար ընթերցասրահ, վաղուց չի համալրվել նոր գրականությամբ |
| Դպրոցն ունի վերանորոգված և մասնակի վերանորոգված դասասենյակներ | ԿԱՊԿ ունեցող երեխաների համար չկան կառուցված թեքահարթակներ, շենքի ներսում և սանհանգույցներում չկան անհրաժեշտ հարմարեցումներ |
| | Բավարար քանակով չկան համակարգիչներ, եղածն էլ հին սերնդի |
| Դպրոցը հարուստ է բազմափորձ, ինչպես նաև եռանդուն ուսուցիչներով, որոնք պատրաստ են իրականացնելու նորարար ծրագրեր և նախագծեր | Չկա ուսուցչի աշխատանքի գնահատման համակարգ |
| Իրականացվում է դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ապահովող միջոցառումներ | Քիչ են իրականացվում ՏՀՏ կիրառմամբ դասեր |
| Կան պատրաստակամ ծնողներ, որոնք կանգնած են ուսուցչի և դպրոցի կողքին | Ծնողները ակտիվ չեն մասնակցում ուսուցչի աշխատանքի գնահատման գործընթացին |
| Դպրոցն ապահովում է սովորողների ինքնահաստատման և բացահայտման համար անհրաժեշտ կրթական միջավայր | Օլիմպիադաներում մասնակցող սովորողները մարզային փուլից այն կողմ չեն կարողանում անցնել |

| | |
|---|---|
| Դպրոցն ունի 1 մանկավարժի օգնական; Դպրոցն ակտիվ համագործակցում է ՏՄԱԿ – ի հետ | Ձմռան ամիսներին ֆիզկուլտուրայի դասերը անկցակցվում են ոչ համարժեք տարածքում /50քմ/ |
| Դպրոցն ունի ապաստարան | |

2018-2023 ուսումնական տարում դպրոցում գործել են, գործում են և՛ ուսումնական և՛ մշակութային և՛ սպրոտային տարբեր խմբակներ՝ (չունենալով հաստիք) բուսասերների, թենիսի, թուրքերնի, անգլերենի, հմուտ ձեռքեր (ձեռնարկատիրական գործունեություն), երկարօրյա, նախակրթարան (ապրիլից հուլիս), որի համար շնորհակալ եմ ուսուցիչներին կարիքը ճիշտ գնահատելու, ջանք ու եռանդ չխնայելու, երեխայի շահը գերակա համարելու համար:

2022-2023 ուստարում դպրոցն ունի վճարովի երկարօրյա՝ հիմք Երևանի քաղաքապետարան N 12/103812-22 գրություն (կցվում է):

## Մանկավարժական համակազմ

Դպրոցում դասավանդում է 19 ուսուցիչ, որոնք իրենց փորձառությամբ, մասնագիտական որակներով ապահովում են սովորողների կրթական կարիքները; Կրթությունը թևակոխել է բովանդակային փոփոխությունների նոր փուլ: Բոլոր ուսուցիչները մասնակցում են հերթական վերապատրաստումներին: Անցել են համապատասխան վերապատրաստումներ և պատրաստվում են դիմել տարակարգի: ՀՊՉ-ի փոփոխությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը և ուսուցիչները իրենց վարպետությունը և կարողունակությունները հարստացնելու խնդիր ունեն:




## ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Դպրոցի **վարչական կազմն** աշխատում է կոորդինացված, ռացիոնալ, կա աշխատանքի հստակ բաժանում:<br>Դպրոցի տնօրենը կատարել է ուսումնական գործընթացի և կազմակերպչական աշխատանքի հստակ բաժանում, ինչը տեսանելի է դարձնում յուրաքանչյուրի կատարած աշխատանքը, թույլ տալիս գնահատել այն, արագ գտնել թերություններն և ուղղել | Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների պակասը<br>Ուսուցիչները խուսափում են Կամավոր ատեստավորմանը մասնակցելուց, ինչպես նաև «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին մասնակցելու ցանկության բացակայություն |
| Դպրոցի ուսուցչական կազմն օժտված է մասնագիտական բարձր կարողություններով, շատերն ունեն աշխատանքային հարուստ փորձ, սկսնակ ուսուցիչները համագործակցում են բազում տարիների փորձ ունեցող մանկավարժների հետ | Որոշ ուսուցիչներ վարժ չեն տիրապետում համակարգչային գիտելիքներին, դասերը պլանավորելիս լիարժեքորեն չեն օգտվում ՏՀՏ-ի ընձեռած հնարավորություններից: |
| Դպրոցի գործունեությունը բաց է, թափանցիկ, աշխատանքի արդյունքները տեսանելի | Թույլ է ուսուցիչների նախաձեռնողականությունը |
| Ուսուցիչները պարտաճանաչ են, պատասխանատու, ցուցաբերում են աշակերտակենտրոն մոտեցում | Թույլ են մանկավարժների խրախուսման մեթոդները |
| Հաճախ են կազմակերպվում բաց դասեր բազմազան մեթոդների, ՏՀՏ- ների կիրառմամբ, քննարկումներ, բանավեճեր, զեկուցումներ | Ուսուցիչները շատ քիչ են ընդգրկված ուսումնական նախագծերի մեջ |

| | |
|---|---|
| Մանկավարժները գիտեն աշակերտների տարիքային հոգեբանությունը | |
| Մանկավարժները գիտեն և հարգում են երեխաների իրավունքները | |
| Աշակերտակենտրոն մոտեցում | |
| Հաստատության գործունեության թափանցիկություն՝սոցկայք արձանագրությունների մատյաններ և պաշտոնական կայքում հրապարակումներ | |
| Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը | |
| Պահպանում են մանկավարժական էթիկայի կանոնները | |
| Կազմակերպում են համակցված դասեր,որը նպաստում է ուսուցանվող նյութի բովանդակության խորը ըմբռմանը | |
| Դպրոցում առաջին քայլերնն են անում նախագծային ուսուցման ոլորտում | |
| | |
| Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայրենասիրական միջոցառումներ և դասեր, փառատոներ , տես՝ https://www.facebook.com/profile.php?id=100057630451614&mibextid=ZbWKwL | |

Մանկավարժական օրինակելի աշխատանքի համար ուսուցիչները բազմիցս արժանացել են **խրախուսանքի**՝ շնորհակալագիր, պատվոգիր, ֆինանսական պարգևատրում չենք ունեցել, քանի որ դպրոցը չունի բավարար միջոցներ:

Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար պարբերաբար կազմակերպվել են տեղեկատվական ժողովներ՝ ծանոթացնելով նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին, օրենսդրական համապատասխան փոփոխություններին: Դպրոցն ունի **3 առարկայական մեթոդմիավորումներ**՝

Հոմանիտար 8 ուսուցիչ

Բնագիտական 4 ուսուցիչ

Տարրական 8 ուսուցիչ







Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքը արդյունավետ դարձնելու **նպատակով**, անհրաժեշտ է.

1. Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը թեմայով:
2. Զարգացնել առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

## Կրթության չափորոշչային որակ

Հանրակրթության ոլորտում հիմնական գերակայությունը ուսման որակի բարձրացումն է և դպրոցի առջև խնդիր է դրված ձևավորել ողջ կյանքի համար կիրառելի գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, արժեհամակարգով օժտված անհատներ:

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում են նշվում հետևյալ հիմնական կետերը.

- Կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում
- Հանրակրթական ուսումնական հաստատությունների, շենքային պայմանների բարելավում
- Ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում
- Բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մակավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում են և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ:
- Կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:

Դպրոցում հստակ սահմանված են ուսումնական գործընթացի նպատակներն ու խնդիրները, պետք է կիրառել համապատասխան տեխնոլոգիաներ՝ ծառայեցնելով սովորողների կրթական կարիքներին: Ուսումնական, մանկավարժական, դաստիարակչական և կառավարման կազմակերպման արդյունավետությամբ արտացոլվում է ուսուցման որակի և աշխատանքային կարգապահության բարձրացումը:

**Աշակերտների թիվը**

| Սեպտեմբերի 1-ի դրությամբ | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվը | 94 | 112 | 107 | 101 | 81 |

**Առաջադիմություն**

| | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր առաջադիմություն | 100% | 100% | 100% | 100% | Ընթացքի մեջ |
| Որակ | 56% | 47% | 49% | 54% | |

**Հաշվետու ժամանակաշրջանում սովորողների շարժը**

| ***Դաս.*** | ***2018-2019 ուսփարի*** | | ***2019-2020 ուսփարի*** | | ***2020-2021 ուսփարի*** | | ***2021-2022 ուսփարի*** | | ***2022-2023 ուսփարի*** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *ընդունում* | *ազատում* | *ընդունում* | *ազատում* | *ընդունում* | *ազատում* | *ընդունում* | *ազատում* | *ընդ.* | *ազատում* |
| ***I*** | ***1*** | ***2*** | ***3*** | ***-*** | ***-*** | ***-*** | ***-*** | | ***2*** | ***1*** |
| ***II*** | ***3*** | ***-*** | ***1*** | ***2*** | ***-*** | ***2*** | ***2*** | ***1*** | ***1*** | ***1*** |
| ***III*** | ***1*** | ***1*** | ***-*** | ***1*** | ***3*** | ***1*** | ***2*** | ***1*** | ***-*** | |
| ***IV*** | ***10*** | ***1*** | ***-*** | ***1*** | ***1*** | ***-*** | ***1*** | ***4*** | ***-*** | ***1*** |
| ***V*** | ***2*** | ***2*** | ***1*** | ***3*** | ***3*** | ***2*** | ***1*** | ***1*** | ***-*** | ***1*** |
| ***VI*** | ***3*** | ***2*** | - | ***-*** | ***3*** | ***1*** | ***1*** | ***4*** | ***2*** | ***1*** |
| ***VII*** | ***3*** | ***-*** | ***-*** | ***-*** | ***4*** | ***2*** | ***1*** | ***3*** | ***1*** | ***3*** |
| ***VIII*** | ***1*** | ***1*** | ***1*** | ***1*** | ***1*** | ***-*** | ***-*** | ***3*** | ***-*** | ***-*** |
| ***IX*** | ***3*** | ***-*** | ***2*** | ***-*** | ***1*** | ***1*** | ***-*** | ***1*** | ***1*** | ***2*** |
| ***Ընդ.*** | ***27*** | ***9*** | ***8*** | ***8*** | ***16*** | ***9*** | ***8*** | ***18*** | ***7*** | ***10*** |

**Հաշվետու ժամանակաշրջանում դպրոց է ընդունվել 65 աշակերտ**
**ազատվել 54 աշակերտ**

Կրթության բնագավառի գերխնդիրն է **կրթության որակի** բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Կրթության որակի բարձրացմանը զուգահեռ անհրաժեշտ է անդրադառնալ

հավասար կրթության հնարավորությանը՝ ինչն ապահովվում է միջավայրի աստիճանական հարմարեցմամբ:

ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը հաշվետու ժամանակաշրջանում




Պետք է իրականացնել և ընդլայնել ներառական կրթության հնարավորությունները, քանի որ հասարակության մեջ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բազմաթիվ երեխաներ, որոնցից շատերն ընդգրկված չեն կրթության մեջ:

**Օտար ազգի աշակերտների թիվը հաշվետու ժամանակաշրջանում ըստ ուստարիների**

| | |
|---|---|
| *2019-2020* | *4* |
| *2020-2021* | *6* |
| *2021-2022* | *5* |
| *2022-2023* | *3* |



Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Դպրոցի ամբողջ անձնակազմի առջև դրվելու է մի տեսլական, այն է՝ **սովորեցնել և տալ այնպիսի գիտելիքներ, որ երեխաները կարողանան իրենց ստացած գիտելիքները կիրառեն ողջ կյանքի ընթացքում**:

Որպես կրթության որակի ցուցանիշ պետք է նշեմ աշակերտների ակտիվ մասնակցությունը օլիմպիադաներին, ինչպես նաև տարբեր մրցույթներին, ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին, որտեղ դպրոցի սովորողները ստացել են պատվոգրեր և մրցանակներ (տես հավելվածում)

***Հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները***

| | *2018-2019* | *2019-2020* | *2020-2021* | *2021-2022* | *2022-2023* |
|---|---|---|---|---|---|
| *Աշակերտ* | *105* | *112* | *111* | *94* | *79* |
| *Գնահատված* | *97* | *99* | *105* | *88* | *71* |
| *Չգնահատված* | *8* | *13* | *6* | *6* | *8* |
| *Ավարտել է* | *10* | *14* | *15* | *18* | *Ընթացքի մեջ* |
| *Գերազանցիկ* | *23* | *15* | *19* | *17* | |
| *Հարվածային* | *27* | *58* | *36* | *25* | |
| *Չառաջադիմողներ* | - | - | - | - | - |
| *Կատարողականը* | *100* | *100* | *100* | *100* | *100* |
| *Ուսուցողական դասեր* | *13* | *2* | *11* | *9* | *13* |
| *Դաս- զրույցներ* | *3* | *9* | *12* | *7* | *5* |
| *Տեսադասեր* | *11* | *62* | *6* | *3* | *68* |
| *Համագործակցային դասեր* | -- | - | - | - | *2* |
| *Դաս- քննարկում* | *4* | - | - | - | *3* |
| *Փոխադարձ դասլսումներ* | *100* | *64* | *63* | *94* | *136* |
| *Վարչական դասլսումներ* | *64* | *88* | *94* | *108* | *95* |
| *Համդպրոցական գրավոր աշխ.* | *16* | *6* | *17* | *16* | *32* |
| *Օլիմպիադայի մասնակիցների թիվը* | *43* | *41* | *33* | *35* | *27* |
| *Տարածքային* | *2* | *5* | *4* | *3* | *14* |
| *Քաղաքային* | - | *1* | - | - | *1* |
| *Մանկավարժական զեկուցումներ* | *16* | *14* | *10* | *9* | *17* |
| *Մրցույթներ* | *10* | *11* | *7* | *9* | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Միջոցառումներ* | *34* | *23* | *37* | *40* | *31* |
| *Հոգևոր դաստիարակություն* | *3* | *1* | *3* | *4* | *2* |
| *Գեղագիտական դաստիարակություն* | *14* | *6* | *10* | *10* | *13* |
| *Ռազմահայրենասիրական դաստիարակություն* | *5* | *4* | *9* | *6* | *5* |
| *Ծնող-համայնք* | *10* | *3* | *5* | *5* | *4* |
| *Դասղեկի ժամերի զրույց* | *82* | *89* | *146* | *94* | *101* |
| *Այցելություններ* | *20* | *19* | *19* | *10* | *20* |
| *Աշակերտ խրախուսանք* | *15* | *12* | *6* | *27* | *15* |
| *Հանդիպումներ* | *15* | *5* | *16* | *7* | *28* |
| *Մրցույթներ՝ բնապահպանական, ֆիզիկական* | *13* | *5* | *6* | *11* | *28* |

Աշակերտության 45- 55% ընդգրկված են արտադասարանական և արտապրոցական խմբակներում:

Ելնելով աղյուսակների համեմատական պատկերից՝ դպրոցի խնդիրն է բարելավել սովորողների գիտելիքների կայուն որակական աճը:

***Դպրոցը կարևորում է սովորողների շարունակական կրթության ապահովումը***

| | **2019-2020** | **2020-2021** | **2021-2022** | **2022-2023** |
|---|---|---|---|---|
| *Աշակերտների թիվ* | *9* | *14* | *15* | *18* |
| *Ավագ դպրոց* | *7* | *5* | *11* | *10* |
| *Քոլեջ* | | *3* | *3* | *8* |

## Իրավիճակի Վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|

| | |
|---|---|
| Ուսումնառության գործընթացը կազմակերպվում է արդյունավետ, դասավանդվող նյութն ուսուցանվում է մատչելի, տրված տնային հանձնարարությունները կատարվում են ինքնուրույն, ուսումնական նյութն ընկալվում է | Շատ փոքր աշակերտական համակազմ |
| Դպրոցում կան օժտված և շնորհալի սովորողներ, որոնք ակտիվ մասնակցում են մարզամշակութային միջոցառումներին, օլիմպիադաներին և տարբեր նախագծերի | Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին չմասնակցելը |
| Կան սպորտի և մշակույթի բնագավառում հաջողություններնգրանցած սովորողներ | Պակասել է մասնակցությունը «Մեղու», «Կենգուրու» մրցաշարին |
| Մեծացել է հետաքրքրությունն ու մասնակցությունը «Կորիզ», «Գիտսերունդ» մրցաշարերին և ծրագրերին, ինչպես նաև **Էկո** ծրագրերին | |
| Կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, վիկտորինաներ, փառատոներ, սեմինարներ, գրքերի ընթերցումներ, կինոդիտումներ, քննարկումներ,հանդիպումներ, սպորտլանդիաներ այցելություններ մշակութային տարբեր կրթօջախներ | |
| ՀՊՉ նոր մոտեցումների մշակում<br>Շարունակական վերապատրաստումներ<br>Դասի որակի ասուգման ստուգաթերթեր<br>Դասալսումներ, դասի դիտարկում<br>փորձի փոխանակում | Որոշ մանկավարժներ խուսափում են նորարարություններից |

| | |
|---|---|
| Կանոնակարգված ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան, ՆԴՎ (Տե՛ս Պաշար ներիշտեմարան https://lib.armedu.am/) ,որը տեղայնացված է մ/մ աշխատանքնային պլաններում՝ ի նպաստ կրթության որակի բարձրացմանը՝ համապատասխանեցնելով նոր չափորոշչի պահանջների<br>Հետ մնացող աշակերտների հետ անհատական անվճար պարապմունքներ<br>Անհատական աշխատանք առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ<br>Առարկայական մրցույթների, բանավեճերի, քննարկումների անցկացում Վիկտորինաներ,ինտելեկտուալ խաղեր, այցելություններ մշակութային տարբեր կենտրոններ<br>Բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ հետաքրքրության մեծացում ՝համակցված դասերի, լաբորատոր փորձերի, էլեկտրոնային դասերի միջոցով | ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի բացակայություն<br><br>Կադրերի սղություն<br>ԲՏՃՄ-մասնագետի բացակայություն<br><br>Սովորողների օտար լեզուների հաղորդակցական կարողությունների զարգացում |

Փորձառու մանկավարժների շնորհիվ աշակերտները ստանում են բավարար գիտելիքներ՝ զարգացնելու կոմպետենցիաները՝ կարողությունները, այն է՝ գիտելիք, հմտություն, քննադատական մտածողություն, արժեքային համակարգ:

**Վերլուծության արդյունքում. պետք է բոլոր ռեսուրսները ուղղվեն թույլ կողմերը վերացնելու կամ հնարավորինս պակասացնելու ուղղությամբ.**

Դպրոցի **գերխնդիրն է սովորողների քանակի** ավելացումը: Սովորողների թվի ավելացման նպատակով պետք է դպրոցի հեղինակություն բարձրացվի, որի համար անհրաժեշտ է դպրոցի ողջ գործունեության լուսաբանում որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց, ինչպես նաև ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը,

սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, հետազոտական, նախագծային աշխատանքների կատարման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը: Մանկավարժների մասնագիտական բարձր որակավորումը:

Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման համար կատարվում են հետևյալ աշխատանքները՝

1. Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան
2. Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը
3. Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ
4. Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիք
5. Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր
6. Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման
7. Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ:
8. Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը:
9. Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:

*Կրթության որակի բարելավման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին:*

*Միաժամանակ* ***պետք է*** *աջակցել մանկավարժներին մասնագիտական որակի բարձրացման, ինչպես նաև համապատասխան պայմաններ ստեղծել փորձարարական հետազոտական, նախագծային աշխատանքներն իրականացնելու համար:*

## Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ

Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացումն են ապահովում հաստատությունում և վերապատրաստող կազմակերպություններում պարբերաբար կազմակերպվող միջոցառումները, դասընթացները, սեմինարերը, խորհրդակցությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսուցիչները սահմանված կարգով մասնակցել են պարտադիր ատեստավորմանը, ԿԳՄՍՆ երաշխավորված կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներին և ունեն համապատասխան վկայագրեր, հավաստագրեր

<table>
<tr><th></th><th>2018-2019 ուստարի</th><th>2019-2020 ուստարի</th><th>2020-2021 ուստարի</th><th>2021-2022 ուստարի</th><th>2022-2023 ուստարի</th></tr>
<tr><td></td><td>8</td><td></td><td>3</td><td></td><td>7</td></tr>
<tr><td>Պարտադիր</td><td></td><td></td><td></td><td>3</td><td>2</td></tr>
<tr><td>ՏՀՏ</td><td>5</td><td>1</td><td></td><td></td><td>19</td></tr>
<tr><td>Միջազգային</td><td>3</td><td>8</td><td>3</td><td>2</td><td></td></tr>
<tr><td>ՀՄԿ</td><td></td><td>20</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="2">Ներառական կրթություն</td><td rowspan="2"></td><td>3</td><td rowspan="2"></td><td rowspan="2"></td><td rowspan="2">19</td></tr>
<tr><td>16</td></tr>
<tr><td>ԿԶՆԱԿ</td><td rowspan="2"></td><td rowspan="2"></td><td rowspan="2"></td><td>2</td><td>1</td></tr>
<tr><td>ՀՊՉ</td><td></td><td>13</td></tr>
<tr><td>Ընդհանուր</td><td>16</td><td>48</td><td>6</td><td>7</td><td>55</td></tr>
</table>

Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացման նպատակով անհրաժեշտ է **նպաստել** ԿԳՄՍՆ երաշխավորված կազմակերպությունների,

միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագիտական որակների զարգացումն ապահովող վերապատրաստումների մասնակցությանը:

**Կազմակերպել** ուսուցիչների վերապատրաստում ՏՀՏ կիրառման ուղղությամբ

Խթանել մանկավարժներին ՝ կատարելու հետազոտական աշխատանքներ:

### Բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայր

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Բազմակարծիք-բոլոր խորհրդակցական, կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների հիմքում բազմակարծություն,որն ապահովվում է տարբեր հարցումների,դիտարկումների և քննարկումների արդյունքում<br>Մասնակցային- հանրային քննարկման արդյունքում որոշումների կայացման գործընթացի ձևավորում<br>Ներառական -ուսումնադաստիարակչական աշխատանքների,ուսումնական պլանների, արտադասարանական աշխատանքների կազմակերպման գործընթացում բոլոր շահագրգիռ անձանց ներառականություն Վերջիններս ժողովրդավարության գործիքներ են,նպաստում են սովորողների ըստ չափորոշչի կարողունակությունների ձևավորման զարգացման ,որակյալ վերջնարդյունքների ապահովմանը,ինչպես նաև աշխատակիցների և սովորողների սոցիալական,առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանությանը | Սովորողների կրթական , սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության վերաբերյալ սակավ միջոցառումներ |

### Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|---|---|
| Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը | |

| | |
|---|---|
| Մեթոդական սեմինարներ՝ միտված ուսուցման որակի բարձրացմանը(տարին 3 անգամ) | Արագ և պարբերաբար կատարվող փոփոխություններին արագ արձագանքման հմտության պակաս |
| Վերապատրաստումների շարունականանության ապահովում, կցված են բոլոր վկայագրերը | Լավագույն ուսուցիչ,լավագույն մ/մ նախագահ, լավագույն դասղեկ խրախուսման բացակայություն |
| ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում | |
| Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում (տես՝ էջ 58 ) | |
| Տարբեր վերապատրաստումների,ծրագրերի մասնակցության միջոցով՝ մասանգիտական հմտությունների կատարելագործումը | ՈՒսուցիչների մոտիվացիայի պակաս ինքնակրթության,համագործակցության,տարբեր նախաձեռնությունների |
| Խրախուսական պատվոգրերը՝ հաշվետու ժամանակաշրջանում 3 լիազոր մարմնի կողմից, 10 դպրոցի տնօրենության կողմից | |
| Յուրաքանչյուր մանկավարժի արժևորումը և բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում | |

## Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող տեխնոլոգիաները

Դպրոցն ունի համակարգչային սենյակ, բայց ոչ բավարար հագեցվածությամբ: Դպրոցն ունի հնարավորություն ինտեգրված դասեր, վիկտորինաներ, խաղ-մրցույթներ անցկացնելու համար, որն էլ նպաստում է սովորողների ինքնակրթությանը, տարբեր նախագծերի իրականացմանը;

Ինտերնետի լիարժեք օգտագործումը հնարավորություն է տալիս ոչ միայն աշակերտներին, այլև ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից՝ մասնագիտորեն կատարելագործվելու, դասն ավելի հագեցած ու բովանդակալից անցկացնելու համար:

Հաստատությունն ուսումնադաստիարակչական աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշտապես օգտվում է ներքոհիշյալ կայքերից՝

1. ԿՏԱԿ հիմնադրամ https://www.ktak.am/

2.<<ԿՐԹՈւԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈւԹՅՈւՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ » ՀԻՄՆԱԴՐԱՄ https://kznakhimnadram.blogspot.com/?m=1

3«Հայկական կրթական միջավայր>> պորտալ՝ http://**www.armedu.am/**

4. «Պաշարների շտեմարան » կայք. https://lib.armedu.am/

5.<<Հեռավար ուսուցում>> համակարգ. https://elearning.armedu.am/

6. «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» կայք https://esource.armedu.am/

Հեռավար ուսուցում կազմակերպելու ժամանակ օգտվել **Microsoft Teams** առցանց հարթակից:

Աշխարհացույցի կրթական հարթակ https://www.facebook.com/groups/ashkharatsuyts/?ref=share&mibextid=NSMWBT

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի _աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

## Իրավիճակի վերլուծություն

| *Ուժեղ կողմեր* | *Թույլ կողմեր* |
|---|---|
| *Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում էլեկտրոնային պատշաճորեն լրացվում են սահմանված կարգերի համաձայն*<br>*•Էլեկտրոնային մատյանների /ԿՏԱԿ/գործարկում և պարբերաբար ստուգում , վերահսկողություն*<br>*•/ԿՏԱԿ/էլեկտրոնային գործող փաստաթղթաշրջանառություն*<br>*•Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում*<br>*•Պարբերաբար անցկացվող սեմինարներ, վեբինարներ՝ միտված նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը դասապրոցեսում*<br>*•MS Teams միասնական կրթական հարթակ*<br>*• Հեռավար կրթական հարթակի կիրառում • Մեդիագրագիտություն*<br>*• Տնային-հեռավար ուսուցում*<br>*Հեռավար դասերի վարում*<br>*•Նախագծային աշխատանքների կազմակերպում/ԿԶՆԱԿ/* | *Գրադարանային ֆոնդը թվայնացված չէ*<br><br>*Ուսուցանող գնահատման ներդրման բացակայություն*<br><br>*Դրամաշնորհային ծրագրերի բացակայություն* |

*Այս հիմնախնդիրները* ***լուծելու նպատակով*** *հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ, եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը :*

### Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

Դպրոցավարության կարևոր ուղղությունը բյուջետային հնարավորություններն են: Դպրոցի ֆինանսավորումը պետբյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական

ծրագրերի՝ կախված սովորողների թվից, ավելացրած պահպանության ծախսեր, իսկ 2023 թվականի սեպտեմբերից դասարան թվով: Իրատեսորեն գնահատելով դպրոցի հնարավորությունները՝ ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

*Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.*

*2023 նախահաշիվը կցվում է*

| | |
|---|---|
| Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ | 32713,2 |
| Կոմունալ ծառայությունների վճարներ | *73,4* |
| Կապի ծառայությունների ծախսեր | 68,0 |
| Տեղեկատվական ծառայություններ | *54,0* |
| Մասնագիտական ծառայություններ | 188,0 |
| Գրասենյակային և տնտեսական ծախսեր | *35,0* |
| Ընթացիկ վերանորոգման | *14,0* |
| Պարտադիր վճարներ | *79,0* |

| Տարի | Ստացված |
|---|---|
| 2018 | 33176,3 |
| 2019 | 31817,1 |
| 2020 | 38412,9 |
| 2021 | 39051,3 |
| 2022 | 38816,2 |
| 2023 | 34573,0 |

**Դպրոցն ունի՝**

| | |
|---|---|
| Ընդհանուր աշխատակազմ | 27 |
| Վարչական աշխատողներ | 3 |
| Մանակավարժներ | 19 |
| Համատեղությամբ աշխատողներ | 4 |
| Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածություն | 14,5ժամ |
| Գրադարանավար | 1 |
| Լաբորանտ | 1 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ | 7 |
| Հաշվապահ | 1 |
| Պահակ<br>Ցերեկային | 3<br>1 |
| Հավաքարար | 2 |

| | |
|---|---|
| Աշակերտների թիվ | 79 աշակերտ |
| Տարրական | 31 |
| Հիմնական | 47 |
| ԿԱՊԿ ունեցող  աշակերտների թիվ | 3 աշակերտ (1-ը թեթև,2-ը միջին) |

# Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրները

**Իրավիճակի վերլուծություն**

| Ուժող կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 14,5ժամ է | Արտաբյուջետային միջոցների բացակայությունը |
| Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 4-5 աշակերտ | Ծնողների, համայնքի կողմից ներդրվող միջոցների բացակայություն |
| Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները | Լրացուցիչ կրթական ծառայությունների ներդրման բացակայությունը |
| Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ եկամուտներին համապատասխան գնահատված կարիքի բավարարմանն ուղղված ծախսերի նախահաշվի պլանավորում և կատարում | Ուսումնական գործընթացի որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համապատասխան լաբորոտորիաններում բովանդակային աշխատանքների կազմակերպման համար ոչ բավարար ֆինանսավորում |
| Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը՝ ըստ օրենսդրական պահանջների | |
| Բյուջետային տարվա ընթացքում կրեդիտորական պարտավորությունների և դեբիտորական պարտքերի բացակայություն,ինչպես նաև գերածախսերի բացառությունը | |
| Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում | |

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր, իսկ դպրոցի ֆինանսավորումը, որպես կանոն, սահմանափակ է: Պետական ֆինանսավորումը բավարարում է հիմնականում աշխատավարձերի, հարկերի, կոմունալ վճարումների, գրենական, տնտեսական միջոցների, անհրաժեշտ ծառայությունների ծախսերի վճարմանը: Այս առումով զարգացման ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել և կատարել իրատեսական պլանավորում՝ հաշվի առնելով դրված նպատակների առաջնահերթությունը:

Շատ կարևոր է, որ, անկախ ազատ ֆինանսական միջոցների առկայությունից, տնօրենը կարողանա գտնել ուղիներ առաջին հայացքից անլուծելի թվացող խնդիրների լուծման համար: Ես կարծում եմ, որ հենց դրանով է նաև պայմանավորված տվյալ ուսումնական հաստատության առաջընթացն ու զարգացումը:

